

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մասնակցություն միջոցառումներին

- ✓ 2018թ. սեպտեմբերի 12-14-ը ՀՀ ՎԿ գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Օսլոյում (Նորվեգիա) կայացած «Մարդկային ռեսուրսների կառավարում և վերապատրաստում. վիճակագրական ծառայությունների ադապտացումը փոփոխվող պայմաններին» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 24-28-ը ՀՀ ՎՊԽ անդամ-վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Մարդահամարների և կացարանների հաշվառման վերաբերյալ փորձագիտական խմբի հանդիպմանը և աշխատաժողովին,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 10-14-ը ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Ստամբուլում (Թուրքիա) կայացած «Տղաների նախընտրության և աղջիկների թերարժևորման կանխարգելմանն ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակում կազմակերպված «Սեռի խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված» միջազգային ուսուցման դասընթացին,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 13-14-ը ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյանը մասնակցել է ք. Բեյրութում (Լիբանան) կայացած Հայաստանի և Լիբանանի միջև Չափումների, հաշվետվայնության և հավաստագրման համակարգի, ինչպես նաև թափանցիկության մասով փորձի փոխանակմանը,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 19-21-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած Եվրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող Եվրոպական բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ներդրման արևելյան երկրորդ փուլի (ԵՀԳ-ԵԲՄՏՀ II Արևելք/ ENI-SEIS II EAST) շրջանակում անցկացրած Օդի որակի մոնիթորինգի և հաշվետվողականության վերաբերյալ տարածաշրջանային աշխատաժողովին,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 4-ը ՀՀ ՎԿ ֆինանսների վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Օհանջանովը, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի առաջին կարգի մասնագետ Մ. Չապանյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Զեյնալյանը և միջազգային

վիճակագրական համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Նալբանդյանը մասնակցել են ք. Սոֆիայում և ք. Լովեչում (Բուլղարիա) կայացած Բուլղարիայի ԱԳՆ-ի «Վարչական կարողությունների և ժողովրդավարական ինստիտուտների կառուցում» ծրագրի շրջանակում Բուլղարիայի Հանրապետության ազգային վիճակագրական ինստիտուտի և Ազգային և համաշխարհային տնտեսության համալսարանի կողմից կազմակերպված վիճակագրական ոլորտի դասընթացին,

- ✓ 2018թ. սեպտեմբերի 27-28-ը ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Դուբլինում (Իռլանդիա) կայացած Արևելյան համագործակցության 2017-2020թ.թ. Պլատֆորմ-4 ծրագրի շրջանակում կազմակերպված «Թվային տվյալների և Արդյունաբերություն 4-ի դարաշրջանում հմտությունների կանխատեսման կատարելագործումը» խորագրով յոթերորդ ուսուցողական աշխատաժողովին,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 27-28-ը ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Բիլբաոյում (Իսպանիա) կայացած «Ակտիվ ծերացման ինդեքս» խորագրով երկրորդ միջազգային աշխատաժողովին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 1-3-ը ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Շիմքենտում (Ղազախստան) կայացած Վիճակագրության 13-րդ SPECA (ՄԱԿ-ի Կենտրոնական Ասիայի երկրների տնտեսությունների հատուկ ծրագիր) աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 2-4-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Կլիմայի փոփոխության վիճակագրություն արտադրողների և օգտագործողների համար փորձագիտական համաժողովին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 2-4-ը ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը մասնակցել է ք. Աստանայում (Ղազախստան) կայացած Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ազգային վիճակագրական գրասենյակների և ոլորտային նախարարությունների TransMonEE ցանցային հանդիպմանը,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 2-4-ը ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը մասնակցել է ք. Քիշնևում (Մոլդովա) կայացած «Ռեսուրսներ-օգտագործում աղյուսակներ» խորագրով աշխատանքային խորհրդակցությանը,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 8-12-ը ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյանը

մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած Էներգետիկայի վիճակագրության 16-րդ դասընթացին,

- ✓ 2018թ. հոկտեմբերի 10-17-ը ՀՀ ՎՊԽ անդամ – վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Աշխատանքի վիճակագիրների 20-րդ միջազգային համաժողովին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 14-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Բանգկոկում (Թաիլանդ) կայացած «Քաղաքականություն – տվյալներ կապը. Եվրամիություն – Ասիա և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի փորձի փոխանակում» խորագրով բարձր մակարդակի աշխատաժողովին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 14-15-ը ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի հանդիպմանը,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 21-26-ը ՀՀ ՎԿ մարդահամարի վարչության պետի տեղակալ Բ. Գևորգյանը մասնակցել է ք. Մոսկվայում և ք. Վելիկի Նովոգորոդում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած ԱՊՀ անդամ-պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների մարդահամարների հարցերի գծով մասնագետների համար ուսուցողական սեմինարին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 22-24-ը ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Դուբայում (ԱՄԷ) կայացած ՄԱԿ-ի տվյալների համաշխարհային ֆորումին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 22-26-ը ՀՀ ՎԿ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը և որակի կառավարման բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Գրբոյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Տարբեր եղանակներով և տարբեր աղբյուրներից ստացվող տվյալների միավորում» թեմայով դասընթացին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 2-ը ՀՀ ՎԿ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Ազգային հաշիվների վիճակագրություն» թեմայով դասընթացին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 23-25-ը ՀՀ ՎՊԽ անդամ-վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Անանյանը և ՀՀ ՎԿ որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը մասնակցել են ք. Կիևում (Ուկրաինա) կայացած «Պաշտոնական վիճակագրության մոդերնիզացում» խորագրով Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրների և Մոնղոլիայի համար բարձր մակարդակի սեմինարին,

- ✓ 2018թ. հոկտեմբերի 23-26-ը ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Միգրացիայի վիճակագրություն» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 25-26-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Բնապահպանական վիճակագրության և ցուցանիշների համատեղ աշխատանքային խմբի 15-րդ նիստին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 1-ը ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Դեջնոնում (Կորեայի Հանրապետություն) կայացած Միջազգային աշխատանքային միգրացիայի վիճակագրության վերաբերյալ աշխատանքային ծրագրի շրջանակում ԱՄԿ-ԿՈՍՍՍՍ համագործակցությամբ կազմակերպված չորրորդ աշխատաժողովին:

Առաքելություններ

- ✓ 2018թ. սեպտեմբերի 18-19-ը ՀՀ ՎԿ-ում էին ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարները և ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների գյուղատնտեսական վիճակագրության հարցերի գծով փորձագետները սեպտեմբերի 18-19-ը՝ ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների փորձագետների հանդիպմանը գյուղատնտեսական վիճակագրության հարցերի վերաբերյալ՝ աշխատանքի ներկայիս իրավիճակը և գյուղատնտեսական համատարած հաշվառման հարցեր քննարկելու և միաժամանակ սեպտեմբերի 19-ին՝ ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի հերթական 59-րդ նիստ անցկացնելու նպատակով,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 17-19-ը ՀՀ ՎԿ-ում էին ԵԱՏՄ մակրոտնտեսական քաղաքականության վարչության մեթոդաբանության և վերլուծության բաժնի պետի տեղակալ Գալինա Իսլամովան և նույն վարչության համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության իրականացման գծով համագործակցության բաժնի խորհրդատու Իգոր Գորկինը ԵԱՏՄ «Ժախսեր-թողարկում» միջպետական աղյուսակի կազմման և պետական կառավարման հատվածի կազմի ձևավորման հարցերով ՀՀ-ի շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից խորհրդակցության անցկացման նպատակով:

Տեղային սեմինարներ

- ✓ 2018թ. սեպտեմբերի 10-14-ը ՀՀ ՎԿ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը, գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխաթյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՀ Վիճակագրության գծով Խորհրդատվական կոմիտեի Սոցիալ-ժողովրդագրական և ճյուղային վիճակագրության գծով ութերորդ նիստին,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 11-12-ը ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի վիճակագիր Ա. Հակոբյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած «Կաթնամթերքի ոլորտի զարգացումը Հայաստանում և Վրաստանում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ ՎԿ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շախբազյանը և միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սողոմոնյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՀ Վիճակագրության գծով Խորհրդատվական կոմիտեի Արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության հարցերով ենթակոմիտեի նիստին,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Եվրոպական Միության «Միասնական աջակցության շրջանակ/Single Support Framework» փաստաթղթով նախատեսված ՀՀ-ին տրամադրվելիք աջակցության վերաբերյալ քննարկմանը,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, 2018թ. սեպտեմբերի 18-19-ը ՀՀ ՎՊԽ անդամ-վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Անանյանը, ՀՀ ՎԿ պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Տ. Սարգսյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետներ Ռ. Վարդանյանը և Լ. Գրիգորյանը,

պարենային ապահովության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Անտոնյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Վ. Ճաղարյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Թումանյանը և վիճակագիր Ն. Աբգարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների փորձագետների հանդիպմանը գյուղատնտեսական վիճակագրության հարցերի վերաբերյալ՝ աշխատանքի ներկայիս իրավիճակը և գյուղատնտեսական համատարած հաշվառման հարցերի քննարկմանը,

- ✓ 2018թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի հերթական 59-րդ նիստին,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, շինարարության վիճակագրության բաժնի պետ Մ. Պետրոսյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը, տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՀ Վիճակագրության գծով Խորհրդատվական կոմիտեի Տնտեսական վիճակագրության գծով ենթակոմիտեի տասնմեկերորդ նիստին,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 25-28-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած Ստոկհոլմի, Բազելի և Ռոտերդամի կոնվենցիայի քարտուղարության կողմից կազմակերպված արդյունաբերական նշանակության քիմիական նյութերի գործածության (ներկրում, օգտագործում, պահում, փոխադրում և հեռացում) կառավարմանն աջակցելու նպատակով վերապատրաստման և կարողությունների զարգացման աշխատաժողովին,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ամրոյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանում տնտեսական և բիզնես հետազոտության տվյալ-

լների աղբյուրները. Վերջին զարգացումները» խորագրով Տվյալների սեմինարին,

- ✓ 2018թ. սեպտեմբերի 26-27-ը ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Վերջ երեխաների հանդեպ բռնությանը. դարձնենք տեսանելի անտեսանելին» խորագրով ազգային համաժողովին,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 27-ին ՀՀ ՎԿ անձնակազմի կառավարման բաժնի պետ Գ. Հարությունյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ԵՄ նախաձեռնություն հանդիսացող ՍԻԳՄԱ մասնագիտացված կառույցի կողմից անցկացված ՀՀ հանրային կառավարման համակարգի համապարփակ գնահատման աշխատանքների վերաբերյալ առաջացած հարցերի քննարկման նպատակով փորձագետների հանդիպմանը,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 28-ին ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի 7-րդ Ազգային զեկույցի ներկայացման սեմինարին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Հ. Սիմոնյանը և ֆինանսների վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Ասլանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանում երեխաներին ուղղված հանրային ծախսերի գնահատման ուսումնասիրության՝ հիմնական արդյունքների և Արգենտինայի հետ գիտելիքների փոխանակման» արդյունքների ներկայացման միջոցառմանը,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը, ՀՀ ՎԿ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջանը, առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը, իրավաբանական բաժնի պետ Ա. Վարդանյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՀ Վիճակագրության գծով Խորհրդատվական կոմիտեի տասներեքերորդ նիստին,

- ✓ 2018թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ ՎԿ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՓՄՁ վիճակագրության բարելավումը Հայաստանում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 9-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ – ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և ՀՀ – ԵՄ Գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը և միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սողոմոնյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՄ «ծախսեր-թողարկում» աղյուսակի գծով Ռուսաստանի արտաքին առևտրի ակադեմիայի գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող խմբի հետ քննարկումներին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 17-ից նոյեմբերի 11-ը ՀՀ ՎԿ ֆինանսների վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Օհանջանովը մասնակցել է ք. Երևանում կայացած Արժույթի միջազգային հիմնադրամի կարողությունների զարգացման ինստիտուտի կողմից կազմակերպված «OL 18.113 – մակրոտնտեսական ախտորոշում» խորագրով առցանց դասընթացին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 17-ին ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Լ. Բեյբությանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հայաստանի զբոսաշրջության ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավման վերաբերյալ ուսումնասիրությունը շահագրգիռ կողմերին ներկայացնելու նպատակով կլոր սեղան քննարկմանը,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 17-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՀՀ – ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և ՀՀ – ԵՄ Գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Զ. Ավոյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Զեյնալյանը մասնակցել են ք. Երևանում կայացած

Զբաղվածության ազգային ռազմավարությանը նվիրված եռակողմ աշխատաժողովին,

- ✓ 2018թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Գործընկերության կարողությունների շարժունակություն» (Mobility Partnership Facility (MPF)) ծրագրի ներածական սեմինարին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 30-ին ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Դ. Մարտիրոսովան, ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը և տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Կայուն զարգացման նպատակների իրականացման և մոնիթորինգի աջակցության» ծրագրի (TCP/ARM/3604/C3) շրջանակներում կազմակերպված աշխատաժողովին,
- ✓ 2018թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Դ. Մարտիրոսովան, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը և մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Սոցիալական պաշտպանության դերը կայուն զարգացման օրակարգում. Չանտեսելով ոչ ոքի Հայաստանում» խորագրով համաժողովին: